

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»  
ԻԱՄ թժշկական հանձնաժողովի  
14/12/2016թ թիվ 5-Լ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում  
«27» դեկտեմբերի 2016թ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»  
ԻԱՄ թժշկական հանձնաժողովի նախագահ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

Արթուր Զավադյան

Միհրան Հակոբյան

## ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-024

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(2017 թվականի ՀԱՄԱՐ «ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԵՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 12-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍՈՎ  
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ)

Հ/հ	Տուժողի առողջությանը պատճառված վնասի տեսակը, որի գծով բժշկական օգնությունը կամ առողջության վերականգնումը Հայաստանի Հանրապետության տարածքում հնարավոր չէ արդյունավետ իրականացնել	Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող բժշկական հաստատության անվանումը, որի կողմից համապատասխան վնասի գծով բժշկական օգնություն ցուցաբերվելու կամ առողջության վերականգնում իրականացվելու դիմաց տուժողն իրավունք ունի ստանալու օրենքով նախատեսված ապահովագրական հատուցում
1.	Բարակ աղիի տարածուն վնասում, ախտահարում կամ կորուստ, որն առաջացրել է բարակ աղիի փոխպատվաստման անհրաժեշտություն	<p>Ռուսաստանի վիրաբուժության գիտական կենտրոն (Ռուսաստանի Դաշնություն, 119991, Մոսկվա,</p> <p>ԳՍՊ-1, Աբրիկովսկի նրբ., տ. 2, հեռ.՝ (7 495) 766-47-04; 246-89-88, ինտերնետային կայք՝ <a href="http://www.med.ru">www.med.ru</a>),</p> <p>Ա.Վ. Վիշնևսկու անվ. վիրաբուժության ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Բոլշայա Սերպուխովսկայա փող., տ. 27, հեռ.՝ (7 495) 236-72-90; 237-08-14, ինտերնետային կայք՝ <a href="http://www.vishnevskogo.ru">www.vishnevskogo.ru</a>)</p>
2.	Լյարդի վնասում, ախտահարում կամ կորուստ, որն առաջացրել է լյարդի մեծածավալ մասնահատման կամ փոխպատվաստման անհրաժեշտություն	<p>Ռուսաստանի վիրաբուժության գիտական կենտրոն (Ռուսաստանի Դաշնություն, 119991, Մոսկվա,</p> <p>ԳՍՊ-1, Աբրիկովսկի նրբ., տ. 2, հեռ.՝ (7 495) 766-47-04; 246-89-88, ինտերնետային կայք՝ <a href="http://www.med.ru">www.med.ru</a>),</p> <p>Ա.Վ. Վիշնևսկու անվ. վիրաբուժության ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Բոլշայա Սերպուխովսկայա փող., տ. 27, հեռ.՝ (7 495) 236-72-90; 237-08-14, ինտերնետային կայք՝ <a href="http://www.vishnevskogo.ru">www.vishnevskogo.ru</a>)</p>
3.	Գլխի, պարանոցի, իրանի, ուսագոտու կամ վերին վերջույթի այրվածքներ, որոնց վերականգնողական բուժումը պահանջում է՝ սպլինտներ՝ վերին վերջույթի համար կամ ճնշող (կոմպրեսիոն)	<p>Ա.Վ. Վիշնևսկու անվ. վիրաբուժության ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Բոլշայա Սերպուխովսկայա փող., տ. 27, հեռ.՝ (7 495) 236-72-90; 237-08-14, ինտերնետային կայք՝ <a href="http://www.vishnevskogo.ru">www.vishnevskogo.ru</a>)</p>

	«հագուստ»՝ դեմքի, իրանի կամ վերին վերջույթի համար	
4.	Մարմնի 50%-ի և ավելի խորը այրվածքներ (III և IV աստիճանի), որոնք պահանջում են ավտորանսպլանտացիայի իրականացում	Ա.Վ. Վիշնևսկու անվ. վիրաբուժության ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Բոլշայա Սերպուխովսկայա փող., տ. 27, հեռ.՝ (7 495) 236-72-90; 237-08-14, ինտերնետային կայք՝ <a href="http://www.vishnevskogo.ru">www.vishnevskogo.ru</a> )
5.	Ողնուղեղային վնասվածքներ, որոնց հետևանքով առաջացած քրոնիկական խիստ արտահայտված ցավային համախտանիշները պահանջում են ռադիոհաճախականային սարքի իմպլանտացիա և (կամ) որոնց հետևանքով առաջացած շարժողական կոպիտ խանգարումները պահանջում են նեյրոստիմուլիացիա	Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի Ն.Ն. Բուրդենկոյի անվան նեյրովիրաբուժության ԳՀԻ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, 4-րդ Տվերսկայա-Յամսկայա փող., տ. 16, հեռ.՝ (7 495) 251-65-26, ինտերնետային կայք՝ <a href="http://www.nsi.ru">www.nsi.ru</a> )
6.	Գանգուղեղային և (կամ) ողնուղեղային վնասվածքի հետևանքով առաջացած շնչառության քրոնիկ խանգարումներ, որոնք պահանջում են դիաֆրագմալ նյարդը խթանող սարքի իմպլանտացիա և (կամ) գանգուղեղային վնասվածքի հետևանքով առաջացած ենթակեղևային հանգույցների դիսֆունկցիա, որը պահանջում է գլխուղեղի խորանիստ հատվածների ստիմուլիացիա	Մոտոլի համալսարանական հիվանդանոց (Չեխիայի Հանրապետություն, Պրահա 5, 15006, Վուվալու 84, հեռ.՝ (420 2) 431-111, ինտերնետային կայք՝ <a href="http://www.fnmotol.cz">www.fnmotol.cz</a> )
7.	Գանգի դիմային հատվածի ոսկրերի ու փափուկ հյուսվածքների տարածուն վնասվածքային դեֆեկտներ, որոնց վերականգնման համար պահանջվում է համակարգչային մոդելավորում	Ստոմատոլոգիայի և դիմաձնոտային վիրաբուժության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Տիմուր Ֆրունզեի փող., տ. 16, հեռ.՝ (7 495) 246-1334, ինտերնետային կայք՝ <a href="http://www.cniis.ru">www.cniis.ru</a> )
8.	Աչք-ակնակապճի վնասվածք՝ ակնագնդի և (կամ)	Մոսկվայի Հեմիլցի անվան աչքի հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտ

	<p>ակնակապճի ոսկրերի ամբողջականության խանգարմամբ, երբ ամբողջությամբ կամ մասնակի պահպանված է տեսողությունը</p>	<p>(Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Սադովայա Չերնոգրյազցկայա փող., տ. 14/19, հեռ.՝ (7 495) 623-73-53, ինտերնետային կայք՝ <a href="http://www.helmholtzeyeinstitute.ru">www.helmholtzeyeinstitute.ru</a>)</p>
<p>9.</p>	<p>Սույն ցանկի 1-8-րդ կետերով չնախատեսված վնասներ, որոնց գծով բժշկական օգնությունը կամ առողջության վերականգնումը Բժշկական հանձնաժողովի որոշմամբ (հիմնված Հայաստանի Հանրապետության տարածքում գործող նեղ մասնագիտական բուժօգնություն ցուցաբերող բժշկական հաստատության եզրակացության, պահանջվող այլ փաստաթղթերի և իրականացված հետազոտությունների վրա) հնարավոր չէ արդյունավետ իրականացնել Հայաստանի Հանրապետության տարածքում</p>	<p>Բժշկական հանձնաժողովի որոշմամբ սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող բժշկական հաստատություն (հաստատություններ), որտեղ համապատասխան վնասի գծով բժշկական օգնությունը կամ առողջության վերականգնումը կարող է արդյունավետ իրականացվել</p>